РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРАГАЦОТН
ОБЩИНА ШАМИРАМ

ARAGATSOTN REGION
SHAMIRAM
MUNICHIPALITY

## Հ Հ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
## ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն Արագածոտնի մարզ գ. Շամիրամ 1 փողոց, 24 շենք
ՇՏn. / 093/43.43.58 /
mrazbroyan@mail.ru

N 10 „04„ 03 „ 2013թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Շամիրամ համայնքի 27.03.2013 թվականի Ըn-02 հերթական նիստի արձանագրության որոշումը առ դիր 8 թերթից :

ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Հ. ԲՐՈՅԱՆ

05
03 2013
6/98-13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔ

27 փետրվարի 2013թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին հաշվապահ Ռուզաննա Հովսեփյանը, գ/ տեղակալ Թոսուն Քոչոյանը :
Նիստը վարում էր համայնքի ղեկավար Մրազ Բրոյանը.
Նիստը արձանագրում էր Յուղաբեր Աբգարյանը.

*Լսեցին*

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
27 ՓԵՏՐՎԱՐԻ ԹԻՎ - 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՅՈՒՂԱԲԵՐ ԱԲԳԱՐՅԱՆ/

1. Համայնքի կոմունալ – կենցաղային հարցերի լուծման նպատակով JCB 3CX մակնիշի տեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտության մասին.
2. Գյուղապետարանին և համայնքի բնակչությանը տրանսպորտային ծառայություններ մատուցելու նպատակով գյուղապետարանին ծառայողական ավտոմեքենա ձեռքբերելու մասին.
3. Համայնքի ղեկավարի աջակցությունը գարնանային զորակոչին.
4. Գարնանային գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստման մասին.

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 1/

*Լսեցին*

ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ – ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ JCB 3CX
ՄԱԿՆԻՇԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ԲՐՈՅԱՆ/

Մեզ բոլորիս լավ հայտնի է, որ ամեն տարի գարնանային տեղումների պատճառով ներհամայնքային գրունտային ճանապարհները մասնակիորեն դառնում են անանցանելի, համայնքի անասունների խմելաջրի ապահովման նպատակով կառուցվել են մի քանի հողային ջրամբարներ, սակայն դրանք անձրևաջրերի կողմից բերված տիղմով լցվելուց հետո դառնում են

անօգտագործելի և անհրաժեշտ է լինում կազմակերպել դրանց մաքրման աշխատանքները: Համայնքի բնակավայրի որոշ տեղերում պետք է կատարվի աղբահանության աշխատանքներ: Բնակչության շինարարական աշխատանքներ կատարելու համար բնակչությունը ստիպված է լինում դիմել այլ տեխնիկայի ծառայություններին, որոնք թանկ են նստում բնակչության վրա: Ուստի ներհամայնքային փողոցների երթևեկությունը, ջրամբարտակների մաքրությունը և բնակչության հույժ կարևոր աշխատանքների կատարման համար ծառայություններ մատուցելու անհրաժեշտությունը ապահովելու համար նպատակահարմար ենք գտնում մեր միջոցների հաշվին ձեռք բերելու մեկ հատ JCB 3CX մակնիշի տեխնիկա:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և 50-րդ հոդվածի 4-րդ կետը համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին համայնքի 2013 թվականի բյուջեի հաշվին համայնքի կարիքները հոգալու նպատակով ձեռք բերել JCB 3CX մակնիշի տեխնիկա:

Կողմ – 5 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 2-/

*Լսեցին*

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Թոսուն Քոչոյան /

Ներկայիս ՀՀ օրենքներով սահմանված կարգով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման առումով գյուղապետարանին բազմաթիվ աշխատանքներ կապված են վերադաս մարմինների և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ: Բացի այդ բնակչությանը օգնելու նպատակով՝ հույժ կարևոր խնդիրների լուծման համար անհրաժեշտություն է ծագել համայնքի միջոցների բավարարման դեպքում ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա վերը նշված աշխատանքները կատարելու և բնակչության տրանսպորտային որոշ կարիքներ բավարարելու համար:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և 50-րդ հոդվածի 4-րդ կետը համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին համայնքի 2013 թվականի բյուջեի հաշվին գյուղապետարանի կարիքների համար ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա:

Կողմ 5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 3-/

*Լսեցին*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՆ

/ԶԵԿ. ՅՈՂԱԲԵՐ ԱԲԳԱՐՅԱՆ/

2013 թվականին գարնանային զորակոչին պետք է մասնակցեին թվով 11 զինապարտներ, սակայն հարգելի պատճառներով դրանք բոլորն էլ գտնվում են արտ. երկրու, մեզ անհայտ հասցեներում: Անհրաժեշտության դեպքում փաստացի զինծառայողների ընտանիքներին սոցիալական պաշտպանվածության բարելավման ուղղությամբ գյուղապետարանը միջոցներ է ձեռնարկում, աջակցում է զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների հնարավոր լուծմանը, աջակցում են բնակչության, հատկապես երիտասարդության, ռազմահայրենասիրական դաստիարակությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին այսուհետ էլ ավելի բարձր հիմքերի վրա դնել իր գործունեությունը պաշտպանության բնագավառում:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N4-ն/

*Լսեցին*

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԹՈՍՈՒՆ ՔՈՉՈՅԱՆ

Անցիալ տարվա գյուղատնտեսության համար ամբարենպաստ պայմանների պատճառով և 2011 թվականի ձեռք բերված անորակ սերմացուի պատճառով զգալիորեն ստացվեց ցածր բերք: Այս տարվա գարնանային աշխատանքների ճիշտ և ժամանակին կազմակերպման համար անհրաժեշտ է ձեռք բերել պետությունից ավելի ցածրարժեք հանքային պարարտանյութեր, քան շուկան է առաջարկում: Սերմացուի հարցով դիմել ենք մարզային և հանրապետական շահագրգիռ կազմակերպություններին համայնքի բնակչությանը բարձրորակ սերմացուով բավարարելու նպատակով: Քանի որ ոռոգման ջրի համակարգը քիչ թե շատ կարգավորված է, պետք է հասնել նրան, որ այդ ցանցի տակ գտնվող մշակովի հողերը գտնվեն ցանքատարածությունների տակ: Ցանքատարածությունների մշակությամբ աշխատանքները և սպասվելիք բերքատվությունը բարձր հիմքերի վրա դնելու համար կարելի է առաջարկել հողի սեփականատերերին կամավորության սկզբունքով միանալու և կոլեկտիվ միավորումներ ստեղծելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով և 44-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ր 2-րդ կետերով համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին կազմակերպումը ապահովելու համար դիմել համապատասխան շահագրգիռ կազմակերպություններին բնակչությանն բարձրորակ սերմացույով և պարարտանյութերով բավարարելու համար:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N5

Համայնքի ավագանիներ

Օզմանյան Սահիդ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստը արձանագրեց Յուղաբեր Աբգարյանը ..........

2013. [illegible]

գ. Շամիրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2013թ. N 01

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է՝

### ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ 27 ՓԵՏՐՎԱՐԻ ԹԻՎ - 02 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Համայնքի կոմունալ – կենցաղային հարցերի լուծման նպատակով JCB 3CX մակնիշի տեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտության մասին.
2. Գյուղապետարանին և համայնքի բնակչությանը տրանսպորտային ծառայություններ մատուցելու նպատակով գյուղապետարանին ծառայողական ավտոմեքենա ձեռքբերելու մասին.
3. Համայնքի ղեկավարի աջակցությունը գարնանային զորակոչին.
4. Գարնանային գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստման մասին.

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N01

Համայնքի ավագանիներ

Օզմանյան Սահիդ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Համ[illegible] Փրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստի արձանագրող Յուղաբեր Աբգարյանը ....................

2013 փետրվարի 27

գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2013թ. N 02

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ – ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ JCB 3CX ՄԱԿՆԻՇԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և 50-րդ հոդվածի 4-րդ կետը համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին համայնքի 2013 թվականի բյուջեի հաշվին համայնքին կարիքները հոգալու նպատակով ձեռք բերել JCB 3CX մակնիշի տեխնիկա:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 02

Համայնքի ավագանիներ

Օզմանյան Սահիդ

Քյալաշյան Տոսուն

Աղէյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստը արձանագրեց Յուղաբեր Աբգարյանը ....................

2013 փետրվարի
Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2013թ. N 03

## ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և 50-րդ հոդվածի 4-րդ կետը համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին համայնքի 2013 թվականի բյուջեի հաշվին գյուղապետարանի կարիքների համար ձեռք բերել ծառայողական ավտոմեքենա:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 03

Համայնքի ավագանիներ

Օզմանյան Սահիդ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Համանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստն արձանագրող Յուղաբեր Արզարյանը ..........

2013 փետրվարի 27
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԾԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2013թ. N 04

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է՝

Առաջարկել համայնքի ղեկավար Միրազ Բրոյանին այսուհետ էլ ավելի բարձր հիմքերի վրա դնել իր գործունեությունը պաշտպանության բնագավառում:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 04

Համայնքի ավագանիներ

Օզմանյան Սահիդ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Ծարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________ Մ. ԲՐՈՅԱՆ

Արձանագրությունը կազմեց Յուղաբեր Աբգարյանը ..........

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԾԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2013թ. N 05

## ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով և 44-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին 2013 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքների ժամանակին կազմակերպումը ապահովելու համար դիմել համապատասխան շահագրգիռ կազմակերպություններին բնակչությանն բարձրորակ սերմացույով և պարարտանյութերով բավարարելու համար:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 05

Համայնքի ավագանիներ

Օզմանյան Սահիդ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շահոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստն արձանագրեց Յուղաբեր Արզարյանը ..........

2013թ. փետրվարի 27
գ. Ծամիրամ